

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ - 2021
10-րդ դասարան - 120 րոպե

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. Ո՞ր ժամանակներին է վերաբերում Եզեկիել մարգարեի գրությունը, որում հիշատակված է Հայաստանը՝ «Թորգոմա տուն» անվանումով. *(0,5 միավոր)*
 - 1) Ք.ա. IV դ. կես
 - 2) Ք.ա. VI դ. կես
 - 3) Ք.ա. V դ. կես
 - 4) Ք.ա. VII դ. կես

2. Ո՞ր տոնին է Հայոց եկեղեցիներում կարդացվում Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացու նամակը՝ ուղղված Կոստանդին Բ. Կայսրին. *(0,5 միավոր)*
 - 1) Վարագա Սուրբ Խաչի տոն
 - 2) Խաչվերաց կամ Սուրբ Խաչի տոն
 - 3) Սուրբ Խաչի երևման տոն
 - 4) Սուրբ Խաչի գյուտի տոն

3. Ո՞ր Ավետարանում է ընդգրկված Հիսուս Քրիստոսի նշանավոր «Լեռան քարոզ»-ը. *(0,5 միավոր)*
 - 1) Ավետարան ըստ Հովհաննեսի
 - 2) Ավետարան ըստ Ղուկասի
 - 3) Ավետարան ըստ Մարկոսի
 - 4) Ավետարան ըստ Մատթեոսի

4. Ի՞նչ կարգախոսով Հայաստանում ուխտավորաբար հյուրընկալվեց Հռոմի Ֆրանցիսկոս քահանայապետը: *(0,5 միավոր)*
 - 1) «Այց Լուսավորչի երկիր»
 - 2) «Այց առաջին քրիստոնյա երկիր»
 - 3) «Այց քրիստոնեության պետական ծննդավայր»
 - 4) «Այց Թորգոմյան երկիր»

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 X 4 = 4 միավոր)

5. Աշտիշատի ժողովը որոշում է հովանավորել դեռևս վաղ միջնադարում Ասորիքից Հայաստան ներթափանցած ճգնավորական կամ _____ շարժումը և հիմնել վանքեր ու կուսանոցներ: *(1 միավոր)*

6. Հայոց կաթողիկոս _____ -ն Եվրոպա ուղարկած Մատթեոս Վանանդեցուն, Ոսկան Երևանցուն և ուրիշների հանձնարարում է նպաստավոր կարծիք ստեղծել Հայաստանի ազատագրության հարցի շուրջ և հող նախապատրաստել Հայաստան – Արևմուտք քաղաքական ու դավանաբանական բանակցությունների համար: *(1 միավոր)*

7. Նշանավոր հոգևոր գործիչ _____ - ն գտնում էր, որ աղոթքի արքայությունները երեքն են՝ արտի արքայություն, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում: (1 միավոր)

8. _____ թ. Կոստանդնուպոլսի նորընտիր պատրիարք Մատթեոս Չուխաճյանը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Ե. Աշտարակեցու անունը: (1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5-7 փաստից

9. Նշանավոր հոգևոր գործիչ անունը համապատասխանեցնել հուղարկավորման տեղի անվանը. (1 միավոր)

1. Ս. Ներսես Ա. Պարթև	ա) Աշտիշատ	1	
2. Ներսես Ե. Աշտարակեցի	բ) Նարեկավանք	2	
3. Ս. Սահակ Ա. Պարթև	գ) Ս. Գայանե եկեղեցու գավիթ	3	
4. Գևորգ Բ. Գառնեցի	դ) Տաթևի վանք	4	
5. Ս. Գրիգոր Նարեկացի	ե) Թորդան	5	
6. Ս. Գրիգոր Տաթևացի	զ) Թիլ	6	
7. Ս. Հուսիկ Ա. Պարթև	է) Ս. Էջմիածնի Մայր տաճարի բակ	7	
	ը) Չորովանք		

10. Ուսումնագիտական կամ հոգևոր կենտրոնի անունը համապատասխանեցնել գավառի անվանը. (1 միավոր)

1) Տարոն	ա) Գանձասարի վանք	1	
2) Խաչեն	բ) Գետիկի վանք	2	
3) Արտազ	գ) Աշտիշատի Ս. Երրորդություն եկեղեցի	3	
4) Վայոց ձոր	դ) Հռոմոսի վանք	4	
5) Ռշտունիք	ե) Հնձուց վանք	5	
6) Շիրակ	զ) Ցախաց քարի վանք	6	
7) Արշարունիք	է) Ս. Թադեի վանք	7	
8) Կարին	ը) Կամրջաձորի վանք	8	
9) Կայեն	թ) Նարեկավանք	9	

№ 11

ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

11. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության. (1 միավոր)

- ա) Աբրահամ Գ. Կրետացի
- բ) Եփրեմ Ա. Չորագեղցի
- գ) Հովհաննես Ը. Կարբեցի
- դ) Աղեքսանդր Ա. Ջուղայեցի
- ե) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի
- զ) Նահապետ Ա. Եդեսացի
- է) Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին:

(2 միավոր)

«Լավ է՝ ես մեռնեմ, քան թե անարժան գործի համար հավատացյալներին մատնեմ անօրենների ձեռքը: Քանի որ [թագավորը] իր անձի վրա Քրիստոսի հոտի կնիքն է կրում: Անառակացել է մարմնով, բայց անհավատ ու հեթանոս չէ»:

1. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը:

(1 միավոր)

2. Ըստ պատմիչի՝ Հայոց ո՞ր կաթողիկոսն է պատասխանել վերոհիշյալ խոսքերով:

(1 միավոր)

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին:

«Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:

1. Ո՞վ է վերոհիշյալ խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին:

(0,5 x 2 = 1 միավոր)

14.1. Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյան, Գարեգին եպս. Հովսեփյան, Զավեն եպս. Մահտեսի-Բաբայան, Հովհաննես քահանա, Տաճատ քահանա, Եզնիկ վարդապետ, Գևորգ վարդապետ Նալբանդյան, Թադեոս վարդապետ, Հովհաննես վարդապետ:

14.2. Կաթողիկոսություն, եպիսկոպոսություն, վարդապետություն, քահանայություն, սարկավագություն:

15. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (1 x 3=3 միավոր)

15.1. (1 միավոր)

- ա. Հովհաննես Է. Զալալ, Զաքարիա Գ., Գրիգոր Թ. Մուսաբեկյանց, Հովհաննես եպիսկոպոս:
- բ. Հովհաննես Է. Զալալ, Զաքարիա Գ., Կարապետ Եվդոկացի, Հովհաննես եպիսկոպոս:
- գ. Հովհաննես Է. Զալալ, Զաքարիա Գ., Գրիգոր Թ. Մուսաբեկյանց, Հովակիմ եպիսկոպոս:

15.2. (1 միավոր)

- ա. Օրբելյաններ, Թոռնիկյաններ, Վաչուտյաններ, Հեթումյաններ:
- բ. Օշինյաններ, Պռոշյաններ, Վաչուտյաններ, Սեֆեդիյաններ:
- գ. Օրբելյաններ, Պռոշյաններ, Վաչուտյաններ:

15.3. (1 միավոր)

- ա. Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցի, Վայքի Ս. Տրդատ եկեղեցի, Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Գյումրիի Ս. Հակոբ եկեղեցի, Արենիի Ս. Աստվածածին եկեղեցի, Լոնդոնի Ս. Եղիշե եկեղեցի, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցի, Նորավանք:
- բ. Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցի, Վայքի Ս. Տրդատ եկեղեցի, Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Գյումրիի Ս. Հակոբ եկեղեցի, Մալիշկայի Ս. Աննա եկեղեցի, Լոնդոնի Ս. Եղիշե եկեղեցի, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցի:
- գ. Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, Վայքի Ս. Տրդատ եկեղեցի, Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Խոր Վիրապի վանք, Մալիշկայի Ս. Աննա եկեղեցի, Լոնդոնի Ս. Եղիշե եկեղեցի, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցի, Նորավանք, Սանահին:

№ 16-17

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (յուրաքանչյուր հարցին՝ $2 \times 0,25 = 0,5$ միավոր, ընդամենը՝ 2 միավոր)

16.1. ա) Ո՞վ է գրքի հեղինակը: -----

բ) Ե՞րբ է նա հաստատվել կաթողիկոսական գահին: -----

Ի Ը Ր Ի . Թ Ը Ր Ի
Ե Ի
Ի Ը Ր Ի Ք Ի Ր Ի Ս Ո Ն Ե Ա Յ

Ի
Ս Օ Ր Ի Ն Ե Ս Ս




Ի Կ Ա Յ Բ Ա Պ Ե Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Տ . Տ . Ն Ե Ր Ո Ւ Մ Ի Ա Մ Տ Ո Ի Ա Ն Ա Ր Ե Ա Ա Ե Ի Վ Ե Կ Ա Ք Ա Ա Թ Կ Ա Թ Ո Ւ Վ Ի Պ Ո Ւ
Ա Մ Ե Ն Ա Յ Ն Կ Ա Յ Ո Յ

Ե Ի Ի Պ Ա Տ Բ Ի Ա Բ Ք Ո Ի Թ Ե Ա Ն Ս . Ե Բ Ո Ի Ս Ա Ն Ե Մ Ի
Տ . Յ Ո Վ Կ Ա Ա Ն Ո Ւ Ս Ի Բ Ա Ջ Ա Ն Ա Բ Բ Ե Պ Ի Մ Ի Պ Ո Ւ

- 16.2. ա) Ո՞վ է աղոթամատյանի հեղինակը: -----
բ) Ե՞րբ է գրել աղոթամատյանը: -----



- 16.3. ա) Ո՞վ է գրքի հեղինակը: -----
բ) Ո՞ր ուսումնական հաստատության ստեղծմանն է աջակցել գրքի հեղինակը:



16.4. ա) Ո՞վ է ողբի հեղինակը: -----

բ) Ո՞ր թվականին տեղի ունեցած դեպքից հետո է գրել ողբը: -----

Ողբի սուրբ Կաթողիկեն

(Սուրբ Կաթողիկենի ողբը)



№ 17
Շարադրանք
(2 միավոր)

1. Ներկայացրե՛ք «Ոսկե կանոն»-ի խորհուրդը և էությունը:
2. Ներկայացրե՛ք ներեկեղեցական կյանքը Վերագարթոնքի շրջանում (1991 – 1994 թթ.):